Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
11-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Առասպել է Հայաստան աշխարհը **առասպել** յուրօրինակ բնությամբ իր գոգում առասպելաբանող ժողովրդով **օժտված** վառ ու երկնածին երևակայությամբ և **ասացողի** շնորհքով: Նա հեքիաթներ է հյուսել զրույցներ իր հանճարների մասին և նրանցից **մեկն** էլ աստվածընտրյալ **Մոմիկն** է Նորավանքի անմահ կերտողը:

Ասում են Մոմիկը սիրահարվում է Սյունյաց իշխանի գեղատեսիլ **դստերը**: Լուրը լսելուն պես զայրացած իշխանը ի դեպ նա խիստ դեմ էր այդ միությանը կանչում է Մոմիկին և ասում

Կանչել եմ տեղեկացնեմ պայմանիս մասին: **Զորաբերանին** բարձր լեռան **մացառուտով** ծածկված տափարակի **եզրին** նմանը չունեցող եկեղեցի կառուցես երդվում եմ աղջկաս քեզ կտամ:

Մոմիկն արագ գործի է անցնում: Նա իր հրաշքներ գործող մոգական **ձեռքերով** քարերին ասես շունչ ու հոգի էր տալիս: Սկզբում կառուցեց գավիթը **հետո** վանքն ամբողջությամբ ապա սրբազան **երկյուղածությամբ** կամարաձև մուտքի ճակատին քանդակեց **Աստվածամորը** Հիսուսը գրկին իսկ հոկված ժայռաբեկորներին նրբակերտ խաչքարեր բոլորված ասեղնագործ ժանյակներով:

Չգիտեմ **ինչպես** մերժեմ այս աղքատ արհեստավորին զօրուգիշեր մտմտում էր իշխանը հիանալով շքեղ կառույցով: Չէ որ խոստացել եմ:

Ու ելքը գտավ նա կանչեց ծառային ու խստիվ պատվիրեց ինչ-որ հնարքով սպանի Մոմիկին: Եվ ավաղ կատարվեց չարի կամքը գողեգող մոտենալով ստրկահաճ սպասյակը հրելով ցած գցեց վանքի գմբեթին կանգնած վարպետին **որ** ընկնելով ահռելի բարձունքից մահացավ հենց իր քանդակած խաչքարերի վրա:

Տաշված վերջին քարը **դարձավ** նրա շիրմաքարը:

1. Կետադրի՛ր համր բնագիրը: (4 միավոր)
2. Գրի՛ր բնագրում թավ գրված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)
3. Գրի՛ր *էլ, հետո, որ, հենց* բառերի (ըստ բնագրում կիրառված գործածության) խոսքիմասային պատկանելությունը, տեսակը: Կազմի՛ր նախադասություններ նրանց այլ խոսքիմասային արժեքներով: (2 միավոր)
4. Գրի՛ր *կնդրուկ, մուճակ, ունելի, հերյուն, անթրոց, տարմ, ծործոր, ծեքծեքել, ձորձ, ծխնի* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակազմությամբ: (1 միավոր)
5. Կազմի՛ր 10 ածանցավոր բառ –*արար* ածանցով (առանց երկրորդ ածանցի) և տրված բառերից ընտրված համապատասխան արմատներով. *ինքնագործունեություն, անառողջ, մրահոն, հիմնարկեք, վարչապետ, բազմատեսակ, եռավանկ, կեցություն, ամենաբարի, լուսնեղջյուր, առտնին, սննդամթերք, ցանցկեն, աղոթագիրք, ամենափրկիչ, ահազդու:* (2 միավոր)
6. Կազմի՛ր նախադասություններ *ոգորել-տոգորել, տնօրենություն- տնօրինություն, կազմակերպական- կազմակերպչական, լիիրավ- լիակատար* հարանուններով: (2 միավոր)
7. Գրի՛ր հինգ դարձվածք *լեզու* բառի տարբեր հոլովաձևերով և մեկնաբանի՛ր: (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Անձրևից հետո» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)